

կայն ի տալն հաղարիւք ոչ վճարիւր, եւ մանաւանդ նորն զհնովն անցեալ գովով՝ գիղացեալ կայր ի վերայ սրբոյ Աթոռոյս»:

Յոյս չկար թէ Սահակ համարձակէր վերադառնալ Էջմիածին Շահ Աբասի օրով: Բայց հայրապետական Աթոռը չէր կրնար անորոշ ժամանակով անհովիւ մնալ: Կանուխ կամ անաղան պիտի բաղմէր հոն մէկը. իսկ արծաթասէր եւ խոտապահանջ Շահը պիտի պահանջէր անվճար մնացած տարիներու հարկերը տոկոսով: Ի տես այս դրութեան, ինչպէս կը գրէ Ղուկաս Գառնեցի «վարանէր թաղծանօք» Էջմիածնի Լուսաբարն եւ նորողիչը: Իբրեւ այնպիսի ամէնէն աւելի Մովսէս վարդապետի վրայ կը ծանրանար պարտքը, Էջմիածինը այս «ծանր հարկապահանջութենէն» ալ ազատել, «զոր թափառական առաջնորդքն արարին իւրեանց անըմբոն զնացիւքն»: Թագուն չէր անշուշտ իրմէ նաեւ այն, թէ հայ ժողովրդեան աչքերը իր վրայ կը հանգչէին. ինքն էր ամէնուն ընտրելին, իբրեւ արժանաւորագոյն յաջորդը Լուսաւորչի գահին վրայ:

Այս պատճառաւ ալ ինքնաբերաբար կամ ուրիշներէ խրախուսուած կ'որոչէ Մովսէս «մեծահոգի» ըլլալ եւ առնել խիզախ քայլը զիմեւու Շահին զթասրտութեան, որ քանիցս բարեացակամ գտնուած էր իր հանդէպ: «Երրորդ անգամ», կը գրէ Գառնեցի, զնաց Շահին ի մայրաքաղաքն Ղազվին, Հայոց Ռէի (1628) թուին. «եւ մտեալ առաջի արքային